ՀՀ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Դեկտեմբերի 3-ին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ընդունեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանին, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Տնօրինությամբ նշանակվել է Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ:

Միացյալ Նահանգներից նոր վերադարձած Գարեգին Սրբազանը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին հանձնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական ուղերձը:

Սրբազան Հայրը միաժամանակ հանրապետության նախագահին տեղեկացրեց Վեհափառ Հայրապետի առողջական վիճակի մասին, նշեց, որ ապաքինման շրջանն ընթանում է բավականին հաջող և սպասվածից արագ:

Զրուցակիցները քննարկեցին նաև Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված միջոցառումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը:

Ինչպես հավաստիացրեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդը, Հայաստանյայց Եկեղեցին պատրաստ է ըստ ամենայնի օժանդակել մեր վերանկախացյալ պետականության կայացման նվիրական գործընթացին և նրա զորացմանը:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՄԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека